ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

02 մայիսի 2022 թվական N 255-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով, 9-րդ հոդվածի 15-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ կետով և հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արման Արսենի Բաբայանին 2022 թվականի մայիսի 02-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնում:
2. Աշխատավարձը սահմանել ըստ Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 07-Ա որոշան թիվ 1 հավելվածով հաստատված պաշտոնային դրույքաչափի:
3. Աշխատանքային պարտականությունները սահմանել պաշտոնի անձնագրով և համաձայն Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 05-Ա որոշման:
4. Սույն որոշումից բխող իրավահարաբերությունները ամրագրել աշխատանքային պայմանագրով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2022 թվականի մայիսի 02 -ից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի մայիս 02

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1,araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

02 մայիսի 2022 թվականի N 256-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամաբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի գյուղ Ջրառատի վարչական տարածքում գտնվող Հեղինե Սարգսի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0068-0012 ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք,գյուղ Ջրառատ, Հ.Թումանյան փողոց 18 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 02

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2022 թվական N 257-Ա

ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220–րդ հոդվածի 1–ին մասով, 223–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի կողմից 2022 թվականի ապրիլի 19–ին «Ջրառատի մանկապարտեզ» ՀՈԱԿ–ում անցկացված ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումները, «Ջրառատի մանկապարտեզ» ՀՈԱԿ–ն տնօրենի 2022 թվականի ապրիլի 26–ի և մայիսի 2–ի բացատրագրերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Ջրառատի մանկապարտեզ» ՀՈԱԿ–ն տնօրեն Գայանե Մանուկյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 2
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
02 մայիսի 2022 թվական N 43-Ա

ԱՐԱՄ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156–րդ հոդվածով, 171–րդ հոդվածի 5–րդ կետով, 176–րդ հոդվածի 3–րդ մասով, հիմք ընդունելով Արամ Ավդալյանի 2022 թվականի ապրիլի 29–ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի պաշտոնակատար Արամ Ավդալյանին տալ չվճարվող արձակուրդ 2022 թվականի մայիսի 2–ից՝ 30 /երեսուն/ օր և 1 տոնական օր տևողությամբ:
2. Արաքսի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի պարտականությունները ժամանակավորապես վերապահել նույն բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մարիա Ազատյանին:
3. Արամ Ավդալյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի հունիսի 2–ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի մայիսի 2
Արաքս համայնք